ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ
համայնք, 5-փ 7, Հեռ. 2-42-26 ,
norik.melkonyan@mail.ru

N 81
31 օգոստոս 2021թ.

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՀԱՐՈՆ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ է ուղարկվում Ողջաբերդ համայնքի ղեկավարի 2021 թվականի օգոստոսին կայացրած թիվ 26-Ա և 27-Ա որոշումները:

Առդիր՝ 3 թերթ:

/ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

Կատ. Քարտուղար՝ Մ. Կարապետյան
Հեռ.՝ 098-29-30-10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ողջաբերդ, 2-42-26, norik.melkonyan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 օգոստոսի 2021 թվականի N 26-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 17-րդ հոդվածի դրույթներով՝

որոշում եմ՝

1. 2021 թվականի օգոստոսի 24-ին ժամը 11^{00}-ին հրավիրել ավագանու արտահերթ նիստ՝ հետևյալ օրակարգով.
1)Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքի եղանակով օտարելու մասին
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

20 21 թ. օգոստոս 23

գ.Ողջաբերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ողջաբերդ, 2-42-26, norik.melkonyan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 օգոստոսի 2021 թվականի N 27-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի,Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման 3-րդ կետի, 1-ին կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2021 թվականի օգոստոսի 24-ի թիվ 23-Ա որոշումը՝

որոշում եմ՝

1.Արմեն Աշոտի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող Ողջաբերդ համայնքում գտնվող 07-052-0138-0004 կադաստրային ծածկագրով 10 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողին կից,համայնքային սեփականություն հանդիսացող 07-052-0138-0002 կադաստրային ծածակագրով այլ հողատեսքը ՝ 1.74 հա մակերեսով, ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքի եղանակով օտարել Արմեն Աշոտի Հովհաննիսյանին՝ 696000 Հայաստանի Հանրապետության դրամ կադաստրային արժեքով:
2.Սահմանել,որ հողամասի սեփականատերը սույն որոշման ընդունումից հետո,15-օրյա ժամկետում Ողջաբերդ համայնքի բյուջեի N 900105227178 հաշվին պետք է վճարի 696000 (վեց հարյուր իննսունվեց հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սահմանել,որ սույն որոշման ընդունումից հետո,հողամասը ձեռք բերողի կողմից 15-օրյա ժամկետում վճարումը չկատարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
4. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ,Հայկանուշ Բաբայանին՝ հողօգտագործողի կողմից սույն որոշման 2-րդ կետում նշված գումարի վճարումից հետո 10-օրյա ժամկետում հողօգտագործողի հետ կնքելու հողամասի առքուվաճառքի

պայմանագիր:
5.Ընդունել ի գիտություն,որ առուվաճառքի պայմանագրից ծագող իրավունքը ենթական է պետական գրանցման անշարժ գույքի կադաստրի համապատասխան ստորաբաժանումում:
6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Մարիամ Կարապետյանը:
7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Արմեն Աշոտի Հովհաննիսյանին որոշման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

2021թ. օգոստոս 25

գ.Ողջաբերդ